

Քաղաքացիների ընդունելություն մարզպետարանում

07.02.2014

2014 թվականի փետրվարի 7-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների ընդունելություն:

Հերթագրվել էր 112 քաղաքացի, ընդունելության էր եկել 108 քաղաքացի: 98 քաղաքացիներ դիմել էին ֆինանսական օժանդակության, այդ թվում՝ բուժման ծախսերի տրամադրման խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվեց: 8 քաղաքացիներ դիմել էին խմելու ջրագծի թախամասային հատվածի վերանորոգման խնդրանքով, իսկ 2-ը բնակարանների վթարային վիճակի մասին:

Մարզպետը հանձնարարեց մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ ուսումնասիրել և գտնել նշված խնդիրների հնարավոր լուծումները: